«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

«01» մայիսի 2021 թ. N 3

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ և ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 13.11.7 կետը՝ Ժողովը որոշում է.

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության 2020 թվականի գործունեության տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված

«Հայաստանի աուդիտորների և
փորձագետ հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության
2021թ. մայիսի 1-ի ընդհանուր ժողովի
N 3 որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ապրիլ 2021

Բովանդակություն

		էջ
1.	ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ	3
2.	ՊԱԼԱՏԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ	4
3.	ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ	8
4.	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	9
5.	ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԶՈՐԱՑՈՒՄ	11
6.	ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐ	13
7.	ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ և ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ԼՈՒԾՈՒՄԸ	16

1. ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Պալատ), հիմնադրվել է 1997 թվականի հոկտեմբերին՝ որպես «Որակավորված հաշվապահների միություն» հասարակական կազմակերպություն և նույն թվականին գրանցվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կոլեգիայի որոշմամբ:

Պալատի 1999 թվականի ընդհանուր ժողովի որոշմամբ «Որակավորված հաշվապահների միություն» հասարակական կազմակերպությունն անվանափոխվել է որպես «Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն (այսուհետ՝ ՀՀԱԱ): Նշված փոփոխությունները գրանցվել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 1999 թվականի հրամանով:

Տարիների ընթացքում Պալատի կանոնադրության մեջ կատարվել են մի շարք փոփոխություններ, որոնցից էական փոփոխությունները հետևյալներն են՝

1) Պալատի 2003 թվականի ընդհանուր ժողովի որոշմամբ Պալատի կանոնադրությունը հաստատվել է նոր խմբագրությամբ, որը գրանցվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 2003 թվականի օգոստոսին,

2) Պալատի 2008 թվականի ընդհանուր ժողովի որոշմամբ Պալատի կանոնադրությունը հաստատվել է նոր խմբագրությամբ, որը գրանցվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 2008 թվականին մարտին,

3) Պալատի 2013 թվականի ընդհանուր ժողովի որոշմամբ Պալատի կանոնադրությունը հաստատվել է նոր խմբագրությամբ, որը գրանցվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 2013 թվականի օգոստոսին,

4) Պալատի 2014 թվականի ընդհանուր ժողովի որոշմամբ Պալատի կանոնադրությունը հաստատվել է նոր խմբագրությամբ, որը գրանցվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 2014 թվականի հունիսին,

5) Պալատի 2016 թվականի ընդհանուր ժողովի որոշմամբ Պալատի կանոնադրությունը հաստատվել է նոր խմբագրությամբ, որը գրանցվել է Հայաստանի Հանրապետության

արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 2016 թվականի հուլիսին:

Պալատի առաքելությունն է խրախուսել Հայաստանում գործող կազմակերպությունների ֆինանսական տեղեկատվության վստահելիությունը օգտագործողների, այդ թվում՝ նաև ներդրողների մոտ: Առաքելությունն իրագործելու նպատակով Պալատը ձգտում է կատարելագործել ՀՀ-ում գործող հաշվապահների և աուդիտորների մասնագիտական կարողությունները՝ որակավորման, շարունակական կրթության, համապարփակ մասնագիտական օժանդակության և որակի հսկողության միջոցով, ինչպես նաև հաշվապահության և աուդիտի պատվիրատուների հետ մշտական փոխադարձ կապի միջոցով:

Պալատը իրականացնում է Հաշվապահների միջազգային դաշնության ստանդարտներին համապատասխան պրոֆեսիոնալ հաշվապահի և աուդիտորի որակավորում շնորհող կրթական ծրագիր:

2. ՊԱԼԱՏԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ

2020 թվականի հունիսին Պալատի ընդհանուր ժողովի որոշմամբ Պալատի կանոնադրությունը հաստատվել է նոր խմբագրությամբ, որի հիմնական նպատակն էր «Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունն անվանափոխել որպես «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպություն և կանոնադրությունը համապատասխանեցնել «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված Մասնագիտացված կառույցի՝ Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտում քաղաքականություն իրականացնող մարմնի կողմից հավատարմագրման պահանջներին: Կանոնադրությունը ՀՀ պետական ռեգիստրի կողմից հաստատվել է 2020թ. օգոստոսին:

2020թ. ապրիլին Պալատը, որպես Մասնագիտացված կառույց, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացավ «ժամանակավոր» հավատարմագրում: Մասնագիտացված կառույցի հավատարմագրումն աուդիտորի վարքագծին ներկայացվող միջազգային չափանիշներին համապատասխանող վարքագծի նորմեր ընդունած հասարակական կազմակերպությանը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ներկայացվող պահանջներին համապատասխանության ճանաչումն է պետության կողմից, որի արդյունքում տրվում է պետական հավատարմագրման վկայական: «Վերջնական» հավատարմագրման համար նախատեսվեց «անցումային» 1 տարի ժամանակաշրջան, որի ավարտին Մասնագիտացված կառույցը հավատարմագրման համար պետք է բավարարի հետևյալ պահանջներին՝

1) ունենա առնվազն 100 ֆիզիկական անձ և 10 իրավաբանական անձ հանդիսացող անդամ.

2) ընդունի աուդիտորի վարքագծին ներկայացվող միջազգային չափանիշներին համապատասխանող վարքագծի նորմեր.

3) ունենա Հաշվապահների միջազգային դաշնության կրթական ստանդարտներին համապատասխանող որակավորման համակարգ:

2020թ. ընթացքում Պալատը ընդունեց մի շարք ներքին իրավական ակտեր՝ ապահովելու համար օրենքով սահմանված հավատարմագրման պահանջները: Մասնավորապես, ընդունվեցին անդամակցության, որակավորման վկայականի փոխարինման և մի շարք այլ կարգեր, որոնք արտացոլված են Պալատի խորհրդի գործունեություն բաժնում:

2021թ.-ին Պալատը ընդունեց նաև Հաշվապահների միջազգային դաշնության Պրոֆեսիոնալ հաշվապահների մասնագիտական էթիկայի կանոնագիրքը՝ նոր խմբագրությամբ:

10.04.2021թ պալատին անդամակցում են և ռեեստրում գրանցված են 281 աուդիտոր, 237 փորձագետ հաշվապահ, 27 աուդիտորական կազմակերպություններ:

Ստորև ներկայացված են Պալատին անդամակցող աուդիտորական կազմակերպությունները.

1 "Փի–Էյջ–Փի Փարթնըրզ" փակ բաժնետիրական ընկերություն,

2 "Ֆոր Էյ Քնսալթինգ" փակ բաժնետիրական ընկերություն,

3 "ՓրայսութերհաուսԿուպերս Արմենիա" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,

4 "Բի-Դի-Օ Արմենիա" փակ բաժնետիրական ընկերություն,

5 "Թրասթ Աուդիտ" փակ բաժնետիրական ընկերություն,

6 "Էյ-Էմ-Էյչ Աուդիտ" փակ բաժնետիրական ընկերություն,

7 "Փըրֆեքթ Աուդիտ" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,

8 "Էյ-Էն Աուդիտ" փակ բաժնետիրական ընկերություն,

9 "Էրնսթ ընդ Յանգ" փակ բաժնետիրական ընկերություն,

10 "Պրոգրես-Աուդիտ" փակ բաժնետիրական ընկերություն,

11 "Այ էֆ Փի" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,

12 "ԹՄ Աուդիտ" փակ բաժնետիրական ընկերություն,

13 "Ջի ընդ Քո Աուդիտ Գրուպ" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,

14 "Գրանթ Թորնթոն" փակ բաժնետիրական ընկերություն,

15 "Գլոբ Աուդիտ" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,

16 "Լոնդոն Բիզնես Գրուպ" ՀՁ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,

17 "Քեյ-Փի-Էմ-Ջի" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,

18 "Քրոու Ընդ Ասատրյանս" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,

19 "Էն Աուդիտ" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,

20 "Էյվիսի Քոնսալթինգ ընդ Աուդիտ" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,

21 " Էկոնոմիկս Աուդիտ" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,

22 " Պրոֆայնընս " սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,

23 " Պի Կա Էֆ Աուդիտ Սերվիս " սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,

24 " Երեվան-Աուդիտ Կոնսալտ" փակ բաժնետիրական ընկերություն,

25 "Դելոյթ Արմենիա" փակ բաժնետիրական ընկերություն,

26 " ՄԵԼԻՔՅԱՆՍ ԸՆԴ ՔՈ " սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,

27 " Էֆ Էս Փի Ըդվայս " սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն:

Համաձայն «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի մասնագիտական կառույցը իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) հաստատում է իր անդամների նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման կարգը,

2) իրականացնում է աուդիտորների և փորձագետ հաշվապահների որակավորման գործընթացը,

3) սահմանում է իր անդամ աուդիտորների և փորձագետ հաշվապահների շարունակական մասնագիտական զարգացման պահանջները,

4) իրականացնում է հսկողություն իր անդամ աուդիտորների և փորձագետ հաշվապահների շարունակական մասնագիտական զարգացման պահանջների պահպանման նկատմամբ,

5) իրականացնում է իր անդամ աուդիտորական կազմակերպությունների և աուդիտորների կողմից մատուցվող աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատում,

6) իրականացնում է իր անդամ փորձագետ հաշվապահների և աուդիտորական կազմակերպությունում չաշխատող աուդիտորների նկատմամբ նույն օրենքով,

«Հաշվապահական հաշվառման մասին» և «Աուդիտորական գործունեության մասին» օրենքներով ներկայացվող պահանջների պահպանման արտաքին գնահատում,

7) իրականացնում է աուդիտորական գործունեությունը և հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ:

Օրենքով և Պալատի կանոնադրությամբ սահմանված գործառույթները իրականացնելու համար Պալատի խորհուրդը ընդունել է մի շարք ներքին իրավական ակտեր, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Պալատի խորհրդի գործունեություն բաժնում:

Պալատի կանոնադրությամբ և կառուցվածքով սահմանված են հետևյալ հանձնաժողովները, որոնք ապահովելու են վերը նշված գործառույթների իրականացումը՝

1) Որակի պահանջների պահպանման գնահատման հանձնաժողով,

2) Կարգապահական հանձնաժողով,

3) Որակավորման հանձնաժողով,

4) Անդամակցության հանձնաժողով,

5) Աուդիտորական գործունեության հանձնաժողով,

6) Հաշվապահական հաշվառման հանձնաժողով:

Ներկայումս մշակվել է միայն Որակավորման հանձնաժողովի կանոնադրությունը, իսկ մնացած հանձնաժողովների կանոնադրությունների մշակումը ընթացքում են:

3. ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Պալատի խորհուրդը 2020 թվականին կազմակերպել է 17 նիստ, որոնցից 5-ը տարվա առաջին կեսին, ՀՀԱԱ անվան ներքո, իսկ մնացածը՝ սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

Առաջին 5 նիստերի ընթացքում քննարկված կարևոր հարցերը 3-ն են եղել՝

- ՀՀԱԱ նոր կանոնադրության քննարկում և հաստատում,
- ՀՀԱԱ հավատարմագրմանն ուղղված գործողություններ,
- ՀՀԱԱ արտահերթ ժողովի կազմակերպում:

Այս 3 հարցերը մինչև 2020թ. սեպտեմբեր բարեհաջող կերպով լուծվեցին: 2020թ. ապրիլին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ՀՀԱԱ-ին շնորհվեց հավատարմագրում: Հունիսին տեղի ունեցավ ՀՀԱԱ արտահերթ ժողովը, իսկ օգոստոսին ՀՀ Պետական ռեգիստրը գրանցեց նոր կանոնադրությունը, ըստ որի ՀՀԱԱ-ն վերանվանվեց «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության:

2020թ. սեպտեմբերից խորհուրդը ձեռնամուխ եղավ, նոր կանոնադրության համաձայն, համապատասխան ներքին իրավական ակտերի մշակմանը և ընդունմանը: Սեպտեմբերից մինչև տարվա վերջ տեղի է ունեցել խորհրդի 12 նիստ, որոնց ընթացքում քննարկվել և հաստատվել են հետևյալ ներքին իրավական ակտերը.

1) 1-Լ Պալատի ռեեստրի վարման կարգը ընդունված 08.09.2020թ,
2) 2-Լ Պալատին անդամակցելու կարգը ընդունված 29.09.2020թ,
3) 3-Լ Ժողովի անցկացման և պատվիրակների ընտրության կարգը ընդունված 29.09.2020թ,
4) 4-Լ ՀՀԱԱ վկայագրերի փոխարինման կարգը ընդունված 13.10.2020թ,
5) 5-Լ Սահմանափակ ժամկետով փորձագետ հաշվապահի որակավորման վկայականի տրամադրման կարգը ընդունված 13.10.2020թ,
6) 7-Լ Ռեեստրում գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման կարգը, ընդունված 29.10.2020թ :

Բացի դրանից, այս 12 նիստի ընթացքում Պալատի խորհուրդը ընդունել է որոշումներ՝ 21 իրավաբանական և 443 ֆիզիկական անձանց՝ պալատին անդամակցության մասին:

4. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

4.1 Որակավորման դասընթացներ

Պալատը իրականացնում է Հաշվապահների միջազգային դաշնության ստանդարտներին համապատասխան պրոֆեսիոնալ հաշվապահի և աուդիտորի որակավորում շնորհող կրթական ծրագիր, որը ներառում է համապատասխան դասընթացների իրականացում և քննությունների անցկացում: Պալատի կողմից իրականացվող դասընթացները և քննությունները համապատասխանում են Հաշվապահների միջազգային դաշնության (այսուհետ՝ ՀՄԴ) կրթության միջազգային ստանդարտներին (IES):

Վերը նշված դասընթացները վարում են հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտում մասնագիտական բարձր հեղինակություն ունեցող անձինք: Նշված դասընթացների նկատմամբ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում ինչպես բիզնես շրջանակները, այնպես էլ պետական մարմինները:

Պալատի որակավորման ծրագրում ներառված են հետևյալ առարկաները.

1) 1.1 Ֆինանսական հաշվառման հիմունքներ,
2) 1.2 Ֆինանսական տեղեկատվություն կառավարման համար,
3) 2.1 Իրավագիտության հիմունքներ
4) 2.2 ՀՀ հարկային օրենսդրություն,
5) 2.3 Ֆինանսական կառավարում և վերահսկողություն,
6) 2.4 Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում,
7) 3.1 Աուդիտ և ներքին վերահսկողություն:

Պալատի որակավորման ծրագիրը հաջողությամբ ավարտելուց հետո, ինչպես նաև անհրաժեշտ մասնագիտական աշխատանքային փորձ ունենալու դեպքում, մասնակիցներին տրվում են ՀՀ օրենսդրությանը և ՀՄԴ կրթության միջազգային ստանդարտներին (IES) համապատասխանող փորձագետ հաշվապահի և/կամ աուդիտորի որակավորումներ: Փորձագետ հաշվապահի որակավորման համար անհրաժեշտ է հանձնել առաջին 6, իսկ աուդիտորի որակավորման համար՝ ծրագրի բոլոր 7 քննությունները:

2020թ-ի ընթացքում Պալատը կազմակերպել է դասընթացներ որակավորման ծրագրի վերը նշված բոլոր առարկաների գծով: Դասընթացներին մասնակցել են 271 անձինք հետևյալ բաշխվածությամբ՝

1) 1.1 Ֆինանսական հաշվառման հիմունքներ - 67 անձ,
2) 1.2 Ֆինանսական տեղեկատվություն կառավարման համար – 46 անձ
3) 2.1 Իրավագիտության հիմունքներ – 24 անձ
4) 2.2 ՀՀ հարկային օրենսդրություն – 48 անձ

5) 2.3 Ֆինանսական կառավարում և վերահսկողություն – 35 անձ

6) 2.4 Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում - 42 անձ

7) 3.1 Աուդիտ և ներքին վերահսկողություն – 9 անձ

4.2 Շարունակական մասնագիտական զարգացման դասընթացներ

Պալատի անդամների շարունակական մասնագիտական զարգացման պահանջը սահմանված է «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի, «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի և «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 17-րդ պահանջների համաձայն: Այն հանդիսանում է նաև Հաշվապահների միջազգային դաշնության կրթական 7-րդ ստանդարտի պահանջ: ՀՄԴ կրթական ստանդարտների համաձայն Պալատի անդամի շարունակական մասնագիտական զարգացման իրականացումը հանդիսանում է Պալատի կողմից ստանձնած ՀՄԴ անդամակցության պարտադիր պահանջ:

Շարունակական մասնագիտական զարգացման նպատակն է տնտեսության տարբեր բնագավառներում Պալատի անդամից պահանջվող մասնագիտական աշխատանքի բարձր ստանդարտների ապահովման համար անհրաժեշտ գիտելիքների պարբերաբար նորացումը: Այն հնարավորություն կտա հանրությանը տրամադրել բավարար երաշխիքներ, որ Պալատի անդամը տիրապետում է հաշվապահական հաշվառման, հարկային, ֆինանսական հաշվետվությունների պատրաստման, աուդիտի և մասնագիտությանը առնչվող ոլորտների վերաբերյալ մասնագիտական արդի գիտելիքներին: Աուդիտորը և փորձագետ հաշվապահը պարտավոր են որակավորման վկայականը ստանալու տարվան հաջորդող տարվանից սկսած անցնել շարունակական մասնագիտական զարգացում: Շարունակական մասնագիտական զարգացման տևողությունը յուրաքանչյուր օրացուցային տարվա համար չպետք է պակաս լինի 20 ժամից, իսկ յուրաքանչյուր երկու հաջորդական տարիների համար չպետք է պակաս լինի 80 ժամից

2020թ. ընթացքում համավարակով պայմանավորված, ինչպես որակավորման, այնպես էլ ՇՄԶ դասընթացները կազմակերպվել են առցանց: Մասնավորապես կազմակերպվել են դասընթացներ ՀՀ օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ, ՖՀՄՍ և հարկային փոփոխությունների վերաբերյալ, COVID-19-ի ազդեցությունը ՖՀՄՍ-ների վրա:

4.3 Այլ դասընթացներ

Պալատն կազմակերպում է նաև 50 ժամ տևողությամբ «Հաշվապահական հաշվառում և հարկային օրենսդրություն» թեմայով դասընթաց սկսնակ և գործող հաշվապահների համար: Դասընթացը ներառում է հետևյալ բաժինները՝

- Հաշվապահական հաշվառման էությունը և խնդիրները, հաշվապահական հաշիվները, հաշվապահական հաշվառման հաշվային պլանը, փաստաթղթավորումը, ֆինանսական հաշվետվության կազմը և կառուցվածքը,
- Ոչ ընթացիկ ակտիվների հաշվառումը,
- Ընթացիկ ակտիվների հաշվառումը,
- Սեփական կապիտալի հաշվառումը,
- Պարտավորությունների հաշվառումը,
- ՀՀ հարկային օրենսդրության հիմունքները՝ հարկերի տեսակները, դրույքաչափերը, հաշվառումը և պատասխանատվությունը հարկային օրենսդրությունը խախտելու դեպքում,

2020թ-ի ընթացքում կազմակերպվել է 4 նման դասընթաց, որին մասկացել են 49 անձինք:

5. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԶՈՐԱՑՈՒՄ

Պալատի հետագա ինստիտուցիոնալ հզորացումը պայմանավորված է բավարար իրավական հիմքերի և ֆինանսական ռեսուրսների առկայությամբ:

Իրավական հիմքեր

2019 թվականի դեկտեմբերին Ազգային ժողովի կողմից ընդունվեց հաշվապահական հաշվառումը և աուդիտորական գործունեությունը կարգավորող հիմնական օրենքների փաթեթը, որը ներառում էր՝

- «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքը,
- «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը, և
- «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքը:

Վերը նշված օրենքների փաթեթը բավարար իրավական հիմքեր է տալիս Պալատին (որպես Մասնագիտացված կառույց)՝ հետագա ինստիտուցիոնալ հզորացման համար: Մասնավորապես՝

1) «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի համաձայն Պալատն իրավունք ունի իրականացնել Պալատի (Մասնագիտացված կառույցի) անդամ հանդիսացող աուդիտորական կազմակերպության և աուդիտորի կողմից մատուցվող աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատում: Նմանապես, Պալատն իրավունք ունի իրականացնել նաև Պալատի (Մասնագիտացված կառույցի) անդամ հանդիսացող փորձագետ հաշվապահի և աուդիտորական կազմակերպությունում չաշխատող աուդիտորի կողմից «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին», «Հաշվապահական հաշվառման մասին» և «Աուդիտորական գործունեության մասին»

օրենքների պահանջների պահպանման, այդ թվում Մասնագիտական էթիկայի կանոնագրքի պահանջների պահպանման արտաքին գնահատում.

2) «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի համաձայն Պալատն (որպես Մասնագիտացված կառույց) իրավունք ունի իր անդամների նկատմամբ կիրառել կարգապահական պատասխանատվության միջոցները՝ արտաքին գնահատման արդյունքներով տրված գնահատականների հիման վրա: Նշված կարգապահական պատասխանատվության միջոցները ներառում են՝

- նախազգուշացում,
- տուգանք,
- մասնագիտացված կառույցին անդամակցության կասեցում,
- որակավորման չեղարկում,.
- մասնագիտացված կառույցին անդամակցության դադարեցում:

3) «Աուդիտորական գործունեության մասին» և «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքների համաձայն Պալատն (որպես Մասնագիտացված կառույց) իրավունք ունի իրականացնել աուդիտորի և/կամ փորձագետ հաշվապահի որակավորում: Որակավորումը տալիս է Մասնագիտացված կառույցը: Որակավորումը տրվում է այն դիմողին, որը միաժամանակ՝

- հանձնել է որակավորման քննությունները.
- որակավորումն ստանալու համար դիմում ներկայացնելու պահին ունի բարձրագույն կրթություն.
- որակավորումն ստանալու համար դիմում ներկայացնելու պահին ունի համապատասխան աշխատանքային փորձ:

Որակավորման քննությունները անցկացման իրավասությունը վերապահված է Պալատին (որպես Մասնագիտացված կառույց):

4) «Աուդիտորական գործունեության մասին» և «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքների համաձայն աուդիտորական կազմակերպությունը, աուդիտորը, փորձագետ հաշվապահը մասնագիտական ծառայություններ իրականացնելու համար պետք է հանդիսանան Պալատի (Մասնագիտացված կառույցի) անդամ:

Վերը ներկայացվածը իրավական հիմքերի է տալիս Պալատի հետագա ինստիտուցիոնալ հզորացման համար:

Ֆինանսական հիմքեր

«Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքում հստակ սահմանված են Պալատի (Մասնագիտացված կառույցի) գույքի (ռեսուրսների) ձևավորման աղբյուրները: Գույքի (ռեսուրսների) ձևավորման հիմնական աղբյուրներ են հանդիսանում

- անդամներից գանձվող գանձվող անդամավճարները,
- մասնագիտական որակավորման քննությունների անցկացումից ստացվող վճարները,
- դասընթացների անցկացումից ստացվող վճարները,
- հրապարակումների վաճառքից ստացված հասույթները.
- պետական և ոչ պետական կառույցներից (այդ թվում՝ օտարերկրյա) ստացված նվիրատվությունները, դրամաշնորհները:

Վերը ներկայացվածը ռեսուրսների առկայությունը բավարար հիմքերի է տալիս Պալատի հետագա ինստիտուցիոնալ հզորացման համար:

6. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐ

Պալատը 2005թ.-ից հանդիսանալով Հաշվապահների միջազգային դաշնության (ՀՄԴ) թղթակից անդամ, իր մասնագիտական գործունեությունն իրականացնում է համաձայն այդ կառույցի կողմից սահմանված միջազգային ստանդարտների: Ամբողջ աշխարհում աուդիտ և հաշվապահություն մասնագիտությունների համաշխարհային մասնագիտական մարմին ճանաչված հեղինակավոր այս կառույցին անդամակցում են 130 երկրներում գործող 180 կազմակերպություններ, որոնցում ընդգրկված են կառավարման մարմիններ, հասարակական տարբեր կառույցներ, տնտեսության, կրթության, գիտության և այլ ոլորտները ներկայացնող 3 մլն. պրոֆեսիոնալ հաշվապահներ, ներառյալ՝ աուդիտորներ, կառավարչական հաշվառման մասնագետներ, հարկային խորհրդատուներ, ներքին աուդիտորներ: Պալատը ՀՄԴ անդամակցությամբ ստանձնել է մի շարք պարտավորություններ, այդ թվում որակի և մասնագիտական միջազգային ստանդարտների ապահովման, միջազգային կրթական ստանդարտներով որակավորման գործընթացի կազմակերպման և այլն: Այդ նպատակներին հասնելու համար մշակվել է համապատասխան գործողությունների պլան, որը հասանելի է ՀՄԴ կայքում՝ http://www.ifac.org/about-ifac/membership/compliance-program/compliance-responses:

Անդամակցության պարտավորությունները հետևյալն են.

1. **Անդամակցության պարտավորություն 1 - Որակի ապահովում**

Պալատը իրականացնելու է իր անդամ աուդիտորական կազմակերպությունների և աուդիտորների կողմից մատուցվող աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատում, ինչպես նաև իր անդամ հանդիսացող փորձագետ հաշվապահի և աուդիտորական կազմակերպությունում չաշխատող աուդիտորի կողմից մասնագիտական օրենսդրության պահպանման, Մասնագիտական էթիկայի կանոնագրքի պահանջների պահպանման արտաքին գնահատում: Վերը նշված արտաքին գնահատումները իրականացնելու համար նախատեսվում է մշակել համապատասխան ընթացակարգեր:

2. Անդամակցության պարտավորություն 2 - Միջազգային կրթական ստանդարտներ

Պալատը հետևում է ՀՄԴ կրթության միջազգային ստանդարտներին (IES), ապահովում է որակավորման ծրագրի իրականացումը՝ համաձայն թարմացված միջազգային կրթական ստանդարտների:

3. Անդամակցության պարտավորություն 3 - Աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտներ

«Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի համաձայն աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտների թարգմանությունը և ընդունումը վերապահված չէ Մասնագիտացված կառույցին (Պալատին), սակայն Պալատը պատրաստակամ է մասնակցել աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտների թարգմանությանը և օժանդակել այդ ստանդարտների կիրառմանը: Պալատը կարող է տրամադրել մեկնաբանություններ՝ աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտների նախագծերի և քննարկվող փաստաթղթերի վերաբերյալ:

4. Անդամակցության պարտավորություն 4 – Մասնագիտական էթիկայի կանոնագիրք

Պալատը սահմանել է իր անդամների համար Մասնագիտական էթիկայի կանոնագրքի պահպանման պահանջ: 2021թ.-ին Պալատը ընդունեց Հաշվապահների միջազգային դաշնության Պրոֆեսիոնալ հաշվապահների մասնագիտական էթիկայի կանոնագիրքը՝ նոր խմբագրությամբ:

5. **Անդամակցության պարտավորություն 5 - Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ**

Չունենալով հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները ընդունելու ուղղակի պատասխանատվություն, Պալատը պատրաստ է աջակցել հանրային հատվածի հաշվապահական հաշվառմանը վերաբերող խնդիրների լուծմանը:

6. **Անդամակցության պարտավորություն 6 – Կարգապահական պատասխանատվության միջոցներ**

«Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի համաձայն Պալատը իրավունք ունի իր անդամների նկատմամբ կիրառել կարգապահական պատասխանատվության միջոցներ: Նշվածը իրականացնելու համար Պալատը պետք է սահմանի կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման ընթացակարգեր:

Անդամակցության պարտավորություն 7 - Ֆինանսական հաշվառման միջազգային ստանդարտներ

«Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների թարգմանությունը և ընդունումը չի վերապահված Մասնագիտացված կառույցին (Պալատին), սակայն Պալատը պատրաստակամ է մասնակցել Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների թարգմանության և օժանդակել այդ ստանդարտների կիրառմանը:

Պալատը կարող է տրամադրել մեկնաբանություններ՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների նախագծերի և քննարկվող փաստաթղթերի վերաբերյալ:

Մասնակցություն միջազգային մասնագիտական միջոցառումներին

2020 թվականին, Covid 19-ի տարածման պատճառով, բավականին տարածում գտան հեռավար վեբինարները և կոնֆերանսները, որոնց ակտիվորեն մասնակցեց նաև Պալատը: Այդ առումով հատկապես պետք է նշել համագործակցությունը Ռուսաստանի Դաշնության Աուդիտորների ինքնակարգավորվող "Содружество" կազմակերպության հետ, որի (IFAC-ի հետ մեկտեղ) կազմակերպած սեմինարներին և քննարկումներին Պալատը մշտապես մասնակցեց: Մասնավորապես, արժե նշել ISA 600-ի թարգմանված տարբերակի քննարկումները, որոնց Պալատի կողմից, որպես աշխատանքային խմբի անդամներ, մասնակցեցին Պալատի խորհրդի անդամ Արթուր Հարությունյանը և Պալատի անդամակցության հանձնաժողովի անդամ Դավիթ Եդիգարյանը: Ստորև ներկայացված է 2020թ. վեբինարների ընդհանուր ցուցակը.

Ամսաթիվ	Թեմա
20 մայիսի 2020	«*Деятельность профессиональных организаций в условиях COVID-19: обмен опытом и успешными решениями*».
29 մայիսի 2020	Международная видеоконференция руководителей профессиональных организаций бухгалтеров и аудиторов Евразийского региона • COVID-19: Его влияние на работу профессиональных организаций бухгалтеров и аудиторов Евразийского региона и на порядок осуществления аудиторской деятельности в условиях его распространения в странах Евразийского региона. • 7 SMO IFAC: Совместное участие в разработке МСА и других стандартов, разрабатываемых независимыми комитетами под эгидой IFAC. • Преимущества создания единой региональной группы в Евразийском регионе.
14 հուլիսի 2020	Заседание Рабочей группы Евразийского региона по разработке МСА.
28 հուլիսի, 22 հոկտեմբերի 2020	Заседание Рабочей группы Евразийского региона по координации совместных усилий ПАО по противодействию отмыванию доходов, полученных преступным путем,
06 օգոստոսի 2020	Заседание Рабочей группы Евразийского региона по разработке МСА.
07 սեպտեմբերի 2020	Заседание Рабочей группы Евразийского региона по разработке МСА, посвященное обсуждению и подготовке общего

	комментария Евразийского региона к проекту МСА 600
23 սեպտեմբերի 2020	«Система контроля качества в аудиторской организации»
28 սեպտեմբերի 2020	Подготовка общего комментария от Евразийского региона к проекту МСА 600 (пересмотренному).
07 հոկտեմբերի 2020	«Аудит оценочных значений и соответствующего раскрытия информации (пересмотренный МСА 540)»
6-12 նոյեմբերի 2020	Трейнинг по практике проведения, администрирования и оценки экзаменов (организован ICAEW при сотрудничестве со Всемирным Банком)
19 նոյեմբերի 2020	Заседание Рабочей группы Евразийского региона по контролю качества, выявлению случаев недобросовестной конкуренции в аудите

7. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ և ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ԼՈՒԾՈՒՄԸ

2020 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած օրենքների համաձայն՝ ՀՀ-ում ներդրվեց հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտների կարգավորման մասնագիտացված կառույցներ-հանրային վերահսկողության խորհուրդ մոդելը: Ուստի, որպես այդ ոլորտներում առկա կարևորագույն հիմնախնդիր, կարելի է դիտարկել վերը նշված օրենքների ամբողջական ներդրման նպատակով անհրաժեշտ իրավական ակտերի ընդունումը, որոնք կարելի է պայմանականորեն բաժանել հետևյալ հիմնական խմբերի՝

1. Մասնագիտացված կառույցների հավատարմագրման հետ կապված,
2. Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհրդի (այսուհետ՝ ՀՎԽ) աշխատանքների հետ կապված,
3. Աուդիտորների, փորձագետ հաշվապահների և աուդիտորական կազմակերպությունների անդամակցության հետ կապված,
4. Փորձագետ հաշվապահների և աուդիտորների որակավորման հետ կապված,
5. Մասնագիտացված կառույցների անդամների գործունեության նկատմամբ արտաքին գնահատման իրականացման հետ կապված,
6. Հաշվապահական հաշվառման և աուդիտի մեթոդական բնույթի իրավական ակտեր:

1-ին և 2-րդ խմբի իրավական ակտերն արդեն իսկ ընդունվել են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից, ինչի արդյունքում Պալատը հավատարմագրվել է որպես մասնագիտացված կառույց, ինչպես նաև ՀՎԽ-ն 2020 թվականի հունիսի 30-ից սկսել է իր աշխատանքները:

2020 թվականին Պալատի աշխատանքները հիմնականում կենտրոնացված էին աուդիտորական կազմակերպությունների, աուդիտորների և փորձագետ հաշվապահների անդամակցության համար անհրաժեշտ իրավական կառուցակարգերի մշակմանը և հաստատմանը, որոնց արդեն անդրադարձել ենք հաշվետվության 3-րդ բաժնում:

2021 թվականին նախատեսվում է շարունակել ոլորտները կարգավորող օրենքներից բխող իրավական ակտերի ընդունման ապահովման գործընթացը: Մասնավորապես նախատեսվում է ապահովել հետևյալ իրավական ակտերի ընդունումը՝

1. Աուդիտորների, փորձագետ հաշվապահների և աուդիտորական կազմակերպությունների անդամակցության հետ կապված.
   - ՀՀ ֆինանսների նախարարության կամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված գործող հաշվապահի որակավորման վկայական ունեցող անձանց օրենքի իմաստով փորձագետ հաշվապահի որակավորման վկայականի տրամադրման պարզեցված կարգ,
   - ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված գործող աուդիտորի որակավորման վկայական ունեցող անձանց օրենքի իմաստով աուդիտորի որակավորման վկայականի տրամադրման պարզեցված կարգ,
   - Կառավարության սահմանած կարգով հավատարմագրված մասնագիտացված կառույցի տրամադրած փորձագետ հաշվապահի սահմանափակ ժամկետով որակավորման վկայական ունեցող անձանց օրենքի իմաստով փորձագետ հաշվապահի որակավորման վկայականի տրամադրման պարզեցված կարգ,
   - Պալատին աուդիտորների, փորձագետ հաշվապահների և աուդիտորական կազմակերպությունների անդամակցության համար օրենքով նախատեսված մուտքի վճարի չափ և վճարման կարգ,
   - Պալատին անդամակցած աուդիտորների, փորձագետ հաշվապահների և աուդիտորական կազմակերպությունների անդամավճարների չափ,
2. Փորձագետ հաշվապահների և աուդիտորների որակավորման հետ կապված՝
   - Որակավորման քննությունների ծրագիր և քննությունների անցկացման կարգ,
   - Որակավորման քննություններից ազատման կարգ,
   - Որակավորման հանձնաժողովի անհատական կազմ և կանոնադրություն,
   - Որակավորման քննությունների վճարի չափ,
3. Մասնագիտացված կառույցների անդամների գործունեության նկատմամբ արտաքին գնահատման իրականացման հետ կապված՝
   - Աուդիտորական կազմակերպությունների կողմից աուդիտորական գործունեությանը վերաբերող հաշվետվությունների ներկայացման կարգ, ժամկետներ և պարբերականություն,
   - Փորձագետ հաշվապահների և աուդիտորների շարունակական մասնագիտական զարգացման հետ կապված պահանջներ,
   - Պալատի անդամների նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման կարգ:

Վերը նշված իրավական ակտերի հաստատմամբ, ըստ էության, կապահովվի նոր օրենքներից բխող հիմնական բոլոր կառուցակարգերի ներդրումը, ինչը հնարավորություն կտա ակտիվորեն անդրադառնալ մեթոդական աշխատանքների իրականացմանը, որոնք մասնավորապես ներառում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների և աուդիտի միջազգային ստանդարտների թարմացման աշխատանքներին աջակցությունը: